Կարծիք

Գոհար Կարենի Սահակյանի

« Հակոբ Կարապենցի փոքր արձակը. գրական առնչություններ »

թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գ. Սահակյանի ատենախոսությունը նվիրված է սփյուռքահայ, ավելի ստույգ՝ ամերիկահայ արձակի նշանավոր ներկայացուցիչ Հ. Կարապենցի գրական ժառանգության զգալի մասը կազմող «փոքր արձակի» ամբողջական ուսումնասիրությանը: Ատենախոսը հեղինակի՝ հայ և համաշխարհային գրական համատեքստում ունեցած առնչությունների ու ազդեցությունների շառավիղում, նորավեպի զարգացման միտումների համապատկերում ուրվագծել և արժևորել է «գերազանցապես նովելիստ Կարապենցի վարպետությունը» (դիտարկումը Գր. Հակոբյանինն է, ինչի հետ համակարծիք է ատենախոսը):

Ատենախոսը մանրակրկիտ ուսումնասիրել է նշված ժանրի ստեղծագործությունները՝ դիտարկելով ինչպես գրողի գրական ժառանգության կարևոր բաղադրիչ, այնպես էլ հայ և համաշխարհային գրականության հետ թեմատիկ, աշխարհայացքային, պոետիկ զուգահեռներում:

Աշխատանքի կառուցվածքում (ներածություն, երեք գլուխներ և եզրակացություններ բաժիններ) պահպանված է թեմատիկ, ժամանակագրական, ներքին տրամաբանված կապը, ինչը նպաստում է ասելիքի ամբողջական և համակարգված լինելուն:

Ներածականում անդրադառնում է թեմայի մշակվածությանը, հայաստանյան և սփյուռքահայ գրաքննադատական մտքին, գտնում է, որ բոլոր գրականագետները, ովքեր անդրադարձել են Կարապենցին, խոսել են նրա կրած ազդեցություններից, բայց գրեթե կամ լիովին քննված չեն հենց գրողի կողմից հուվշող համաշխարհային գրողների հետ առնչակցությունները, ինչը դառնում է խնդրո առարկա: Ատենախոսը համոզիչ փաստարկներով պայմանավորում է աշխատանքի նպատակայնությունն ու արդիականությունը՝ կարևորելով ընտրված թեմայի ուսումնասիրության վերաբերյալ քննադատական մտքի բացով, այն լրացնելու գիտական միտումով: Ամփոփ ու խորքային

քննություն է արված, որը զերծ չէ սյուժետային վերապատման, նկարագրական ինչ-ինչ տարրերից, ինչը, սակայն, ամենևին չի ազդում գիտական վերլուծության որակի վրա:

Վեր է հանված Հ. Կարապենցի կրած գրական, աշխարհայացքային ազդեցությունները, աղերսները հայ և համաշխարհային նշանավոր գրողների հետ՝ հիմնավորելով կոնկրետ զուգահեռներով: Այդ առնչակցությունները ատենախոսը կարողանում է տեսնել, հիմնավորել թեմատիկ, կերպարային, ինչպես նաև պատումի իրացման պոետիկայի շրջանակներում, ինչն էլ Կարապենցի նորովի ու ամբողջական բացահայտմանը ուղղված ճիշտ և շահեկան միտում է:

Աշխատանքում առանցքային է համեմատական գիտամեթոդը, ինչի մասին նշում է ատենախոսը, սակայն հարկ է նշել, որ գլուխների ներսում նկատելի են նաև մեթոդական համադրություններ: Հատկապես, երբ անդրադառնում է պատումի իրացման ձևերին, կառուցակազմում երևակվող խորհրդապատկերներին, բառի իմաստային-կիրառական դերին, կերպարների հոգեկազմավածքին, էքզիստենցիալ ճգնաժամի համատեքստում, երբ նախընտրում է ոչ թե առանձին կերպարի վերլուծություն, այլև ընդհանրական՝ օտարված «կղզյակ-մարդու» տիպի վերհանում: Այսպիսով, առանձին գլուխների ներսում, առաջադրված ուսումնասիրվող խնդրով պայմանավորված, նկատելի է այլ գիտամեթոդներից օգտվելու փաստը, ինչն ատենախոսը չի նշում՝ բավարարվելով միայն ընդհանուր մեթոդի նշումով:

Ատենախոսի ուսումնասիրության շրջանակից դուրս են նյութի տրամաբանական առնչակցությանը չենթարկվող գործերը:

Կարապենցի տեսական հայացքներով իր իսկ գործերին մոտենալը ատենախոսը համարում է վերլուծության արդյունավետ մեթոդ, ինչին կարելի է միանշանակ համաձայնել:

Ատենախոսը համամիտ է գրաքննադատական կարծիքներին՝ Կարապենցի՝ արևելահայերենով ստեղծագործելու կարևորության մասին: Եվ դիտարկում է այն՝ իբրև գրողի ինքնագիտակցման և ինքնության դրսևորույթ:

Առաջին գլխում («*Տարագրության թեման և գոյապաշտական մոտիվները Հ. Կարապենցի պատմվածքներում. «Անծանոթ հոգիներ»* շարքը») ատենախոսը կենտրոնացել է տարագրության և մարդու ճակատագրում իրողության անդրադարձին, անցավոր մարդու կերպարին, օտար իրականության մեջ մարդու՝ ինքն իրենից և հասարակությունից օտարման երևույթին, ինչը գրական հարթության մեջ Կարապենցի

առնչակցության դրսևորումն է գոյապաշտական գրականության հետ: Կարապենցի պատմվածքները խորքային վերլուծության է ենթարկում «չափավոր» էկզիստենցիալ, գոյաբանական խնդրադրումների շրջանակում:

Երկրոդ գլխում *(«Տարագրության գեղարվեստական տարեգրությունը») «Նոր աշխարհի հին սերմնացանները»* շարքի համեմատական վերլուծությամբ անդրադառնում է հայի կենսահաստատ բնույթին, հարատևելու արիությանը: Այստեղ ազգային թեմատիկան է ուսումնասիրված:

Այս գլխում ուշագրավ է ազգային հոգեկերտվածքով կերպարների ճակատագիրը՝ ամերիկյան իրականության մեջ: Պայմանական Ջեմֆերսոն քաղաքը օտար իրականության մեջ հայի ինքնության պահպանման հոգևոր կենտրոնն է, պատումի կառուցակազմում տարածաժամանակային միասնության արժեբանական գործառույթով:

Արտենախոսը Հր. Թամրազյանի՝ շարքը վեպ համարելու դիտարկումը զարգացնում է, անդրադառնում է ժանրային որոշարկմանը: Ջուգահեռելով համաշխարհային գրականության օրինակներին՝ դիտարկում է շարքը՝ իբրև առանձին պատմություններով, բայց ընդհանուր միջավայր, ժամանակ, հերոսներ ունեցող կոլորիտային կազմույթ, ինչը հատուկ է վեպ-քրոնիկոնի ժանրատեսակին՝ անվանելով ժանր, թերևս նկատի ունենալով վեպի ժանրային առանձնահատկությունները, սակայն գիտական ձևակերպումը պիտի լինի հստակ (ժանր, ժանրատեսակ):

Ատենախոսության երրորդ գլխում՝ *«Քաղաքակրթության ճգնաժամի պատկերը կարապենցի պատմվածքներում»,* քննարկում է «Միջնարար» և «Ամերիկյան շուրջպար» շարքերը: Ատենախոսի դիտաարկման կենտրոնում մարդկությանն ուղղված քաղաքական ճգնաժամի պատկերումն է: Ջուգահեռում է Կաֆկային, Բեկկետին, հիշատակում է՝ ինչպես այս գրողների, Կարապենցի մոտ նույնպես հերոսներն անուններ չունեն. իբրև պայման խառնվածքի բացակայության, հանգամանք, որ ընդգծում է ոչ թե մարդու, այլ մարդկության խնդիրներին կենտրոնանալը: Սեփական ինքնությունից օտարված կերպարների ընդհանրական պատկերն է վերհանում:

Ամերիկյան իրականության պատկերը Կարապենցի պատմվածքներում որոշարկվում է կոնկրետ անհատների ճակատագրերում՝ ընդհանրացնելով քաղաքակրթության ճգնաժամի պատկերը:

Այս գլխում անդրադառնում է պատումի իրացման օբյեկտիվ եղանակին՝ համեմատելիները տեսնում Հեմինգուեյի և Քարվերի հետ:

Եզրահանգումները բխում են աշխատանքի հիմնավոր և առանցքային դրույթներից:

Այսպիսով՝ գիտական աշխատանքի ներսում պահպանված է ժամանակագրական հաջորդականությունը, գլուխների միջև անցումները նյութի ուսումնասիրման ամբողջականությանը չեն խանգարում: Ատենախոսության հեղինակը հանգամանորեն և համոզիչ փաստարկներով է ներկայացնում պատմվածաշարերի միջև ներքին կապերի առկայությունը՝ այդպիսով արդարացնելով աշխատանքի համար ընտրված կառուցվածքը:

Ատենախոսը հաղթահարել է իր առջև դրված խնդիրը և առանձին գլուխների ներսում հայ և համաշխարհային գրականության ծիրում զուգահեռի վրա է դնում ոչ միայն թեմատիկ, աշխարհայացքային առնչակցություններն ու կրած փոխազդեցությունները, այլև հարկ եղած դեպքում կերպարների, պատկերների, պատումի օբյեկտիվ կամ հարակցային եղանակների իրացումները, ինչն արժեքավոր է դարձնում ատենախոսությունը:

Աշխատանքը գրականագիտական օգտակար և հետաքրքիր նշանակություն ունի: Այն ամբողջական և կշռույթով քննություն է Հ. Կարապենցի «փոքր արձակի» ուսումնասիրության մեջ: Տեսական ընդհանրացումները լիարժեք են, հիմնավոր և փոխկապակցված, իսկ առաջադրված խնդիրների քննությունն առանձանում է գիտական բարձր մակարդակով:

Աշխատանքում կան գիտական որակի վրա չազդող տեխնիկական սպրդումներ:

Գոհար Կարենի Սահակյանը ատենախոսության համար արժանի է հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին, որի համար և միջնորդում ենք մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ բ.գ.թ. Լիլիթ Ղազարյան

ՎՊՀ հենակետային վարժարան՝ ուսուցիչ

09. 10. 2021թ.